# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՄՐԳԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Մրգավան համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Մրգավան, ,

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

08 ՕԳՈՍՏՈՍԻ 2019թվականի N 25

## ՄՐԳԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2019 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 08-Ի ԹԻՎ 07 ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ կետի պահանջներով՝ Մրգավան համայնքի ավագանին

*ՈՐՈՇՈՒՄ Է՝*

Հաստատել Մրգավան համայնքի ավագանու 2019թվականի օգոստոսի 08-ի թիվ 07 նիստի հետևյալ օրակարգը.

1. Համայնքային սեփականություն հանդիսացող 0.00883 հա բնակավայրերի այլ հողամասը ուղղակի վաճառքով օտարելու թույլտվություն տալու մասին:

2. Համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերը աճուրդային կարգով օտարելու թույլտվություն տալու մասին:

3. Մրգավան համայնքի 2019թվականի բյուջեում փոփոխություն կատարելու մասին:

4. Համայնքապետարանին պատկանող տրակտորը և կցասայլը աճուրդ-վաճառքով օտարելու մասին:

Կողմ -4 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱԼԵՔՍԱՆՅԱՆ ԱՐՄԵՆ
ԳԱԼՍՏՅԱՆ ԱՐԱՅԻԿ
ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՍՏՅՈՊԱ
ՄԱԹԵՎՈՍՅԱՆ ԿԱՐԵՆ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **ՍԱՄՎԵԼ ՎԱՐԴԱՆՅԱՆ**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՄՐԳԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Մրգավան համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Մրգավան, ,

## Ո Ր Ո Շ Ու Մ

08 ՕԳՈՍՏՈՍԻ 2019թվականի N 26

## ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ 0.00883 ՀԱ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ՀՈՂԱՄԱՍԸ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔՈՎ ՕՏԱՐՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով << Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 21-րդ կետով, Հայաստանի Հանրապետության <<Հողային օրենսգրքի >> 66-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության կառավարության 12.04.2001թվականի N286-Ն որոշման դրույթներով և Հայաստանի Հանրապետության Կառավարության 26.05.2016թվականի թիվ 550-Ն որոշման 1-ին կետի թիվ 1 և թիվ 2 ենթակետերի պահանջներով հաստատված կարգով՝ համայնքի ավագանին ***որոշում է***

1. Մրգավան համայնքի սեփականությունը հանդիսացող Վ. Սարգսյան 2/2 հասցեում գտնվող 0.00883հա 03-061-0035-0039 կադաստրային ծածկագրի տակ գտնվող հասարակական կառուցապատման հողամասը, որը գտնվում է քաղաքացի Սպարտակ Խալաթյանին սեփականության իրավունքով պատկանող հասարակական նշանակության հողամասին ու շինությանը կից, հնարավոր չէ օտարել որպես առանձին գույքային միավոր, ուստի թույլատրել այդ հողամասը ուղղակի վաճառքի կարգով՝ ընդլայնման նպատակով, օտարել քաղաքացի Սպարտակ Խալաթյանին:

Կողմ -4 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱԼԵՔՍԱՆՅԱՆ ԱՐՄԵՆ
ԳԱԼՍՏՅԱՆ ԱՐԱՅԻԿ
ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՍՏՅՈՊԱ
ՄԱԹԵՎՈՍՅԱՆ ԿԱՐԵՆ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԱՄՎԵԼ ՎԱՐԴԱՆՅԱՆ**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՄՐԳԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Մրգավան համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Մրգավան, ,

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

08 ՕԳՈՍՏՈՍԻ 2019թվականի N 27

## ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐԸ ԱՃՈՒՐԴԱՅԻՆ ԿԱՐԳՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 21-րդ կետով՝ Մրգավան համայնքի ավագանին ***որոշում է***

1.Թույլատրել համայնքի ղեկավարին օրենսդրությամբ սահմանված կարգով՝ աճուրդային եղանակով օտարել համայնքային սեփականություն հանդիսացող հողամասեր հետևյալ ծածկագրերով և լոտերով.

- 03-061-0039-0066 ծածակագրի տակ գտնվող 0.02074հա բնակավայրերի բնակելի կառուցապատման հողամաս, հասցեն Խ.Աբովյան 31/4
- 03-061-0952-0002 ծածկագրի տակ գտնվող 0.166հա բնակավայրերի հասարակական կառուցապատման հողամաս, հասցեն Խ. Բադալյան 56/1
- 03-061-1006-0002 ծածկագրի տակ գտնվող 0.01786 հա գյուղատնտեսական նշանակության այլ հողատեսք

2. Աճուրդային կարգով օտարվող բնակելի և հասարակական կառուցապատման հողամասերի մեկնարկային գինը սահմանել կադաստրային արժեքի 100%-ի չափով՝ 1քմ-ը 528դրամով:

3.Աճուրդային կարգով օտարվող գյուղատնտեսական նշանակության հողամասի մեկնարկային գինը սահմանել կադաստրային արժեքի 100%-ի չափով: Մեկ հեկտարի համար կազմում է 57500դրամ:

4. Հողամասերի օտարման վերջնաժամկետը՝ 01.12.2019թվական:

Կողմ -4 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱԼԵՔՍԱՆՅԱՆ ԱՐՄԵՆ

ԳԱԼՍՏՅԱՆ ԱՐԱՅԻԿ

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՍՏՅՈՊԱ

ՄԱԹԵՎՈՍՅԱՆ ԿԱՐԵՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԱՄՎԵԼ ՎԱՐԴԱՆՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՄՐԳԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Մրգավան համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Մրգավան, ,

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

08 ՕԳՈՍՏՈՍԻ 2019թվականի N 28-Ն

## ՄՐԳԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2019ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետությա օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով՝ Մրգավան համայնքի ավագանին ***որոշում է***

Մրգավան համայնքի 2019թվականի բյուջեում կատարել հետևյալ փոփոխությունները.

1.Կառավարման մարմնի պահպանում /01.01.01.51/ ծրագրի 4241 /մասնագիտական ծառայություններ/ հոդվածից Ճանապարհաին տրանսպորտ/04.05.01.51/ ծրագրի 4251/ ընթացիկ նորոգում/ հոդվածին հատկացնել 330000/երեք հարյուր երեսուն հազար/ դրամ:

2. Վարչական բյուջեի եկամտային մասում կատարել հետևյալ փոփոխությունը.

Ֆիզիկական անձանց գույքահարկի պլանը ավելացնել 300000 /երեք հարյուր հազար / դրամու

Ծախսային մասում այդ գումարները հատկացնել վարչական բյուջեի պահուստային ֆոնդ/11.01.02.51/ ծրագրի 4891/պահուստային միջոցներ/ հոդվածին:

3.Վարչական բյուջեից պահուստային ֆոնդ/11.01.02.51/ ծրագրի 4891/պահուստային միջոցներ/ հոդվածից ջրային կառույցների շահագործում և պահպանում/06.06.01.55/ ծրագրի 4251/ ընթացիկ նորոգում/ հոդվածին հատկացնել 980000/ինը հարյուր ութսուն հազար / դրամ:

Կողմ -4 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱԼԵՔՍԱՆՅԱՆ ԱՐՄԵՆ

ԳԱԼՍՏՅԱՆ ԱՐԱՅԻԿ

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՍՏՅՈՊԱ

ՄԱԹԵՎՈՍՅԱՆ ԿԱՐԵՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԱՄՎԵԼ ՎԱՐԴԱՆՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՄՐԳԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Մրգավան համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Մրգավան, ,

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

08 ՕԳՈՍՏՈՍԻ 2019թվականի N 29

## ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻՆ ՊԱՏԿԱՆՈՂ ՏՐԱԿՏՈՐԸ ԵՎ ԿՑԱՍԱՅԼԸ ԱՃՈՒՐԴ-ՎԱՃԱՌՔՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 21-րդ կետով՝ Մրգավան համայնքի ավագանին որոշում է

Թույլատրել Մրգավան համայնքի ղեկավարին օրենքով սահմանված կարգով կազմակերպել և անցկացնել Մրգավանի համայնքապետարանին պատկանող 1983թ. արտադրության ՉՊՏՍ-4 մակնիշի կցասայլի և 1983թ. արտադրության ՅՈՒՄԶ-642 մակնիշի տրակտորի աճուրդ-վաճառքը:

1. Մեկնարկային գինը սահմանել 2.083.000 (երկու միլիոն ութսուներեք հազար) դրամ:
2. Քայլի նվազագույն չափը սահմանել 10.000 (տաս հազար) դրամ:

Կողմ -4 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱԼԵՔՍԱՆՅԱՆ ԱՐՄԵՆ
ԳԱԼՍՏՅԱՆ ԱՐԱՅԻԿ
ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՍՏՅՈՊԱ
ՄԱԹԵՎՈՍՅԱՆ ԿԱՐԵՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԱՄՎԵԼ ՎԱՐԴԱՆՅԱՆ